ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«25» մարտի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ Մ. Անանյան

ԳԲԽ-23/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի 10.03.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 10.03.2016թ. ներկայացրած բողոքով «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ 29.01.2016թ. մասնակցել է «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից պահնորդական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԱ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և առաջին փուլով ճանաչվել է հաղթող մասնակից:

Երկրորդ փուլի համար պահանջվել է ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, որն Ընկերության կողմից ներկայացվել է:

Ներկայացրած փաստաթղթերը Պատվիրատուի կողմից ուսումնասիրվելուց հետո պահանջվել է ներկայացնելու պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու փաստը՝

որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները, որը սահմանված կարգով և ժամանակին Ընկերության կողմից ներկայացվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.02.2016թ. տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1.3 կետով որոշում է կայացրել մերժել «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ անհամապատասխանությունը շտկելու պատճառաբանությամբ:

Ըստ Ընկերության՝ Պատվիրատուն խախտել է «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, որը հստակ սահմանում է «թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ) իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն թիկնապահի կամ պահնորդի որակավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն չեն կարող սահմանվել մասնակցի գնումների մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք նախատեսված չեն սույն հոդվածով, խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2016թ. տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1.3 կետով կայացրած որոշումը:

2. <u>«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ը 15.03.2016թ. թիվ 056/գ-2016թ. գրությամբ «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ 2016թ. «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԱ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

Գնահատման հանձնաժողովի կողմից հաստատվել է «ԱԱ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) տեքստը, որի ՄԱՍ 1-ի 2-րդ կետի 2.3 ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը, որպես պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջ, պետք է իր աշխատակազմում ունենա ընդգրկված առնվազն 3 պահնորդ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն: Հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը վերջինիս ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է նշված մասնակցին, որպեսզի վերջինս ներկայացնի որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը:

Պատվիրատուն նշել է, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ: Մասնավորապես, Ընկերության կողմից չի ներկայացվել պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու փաստը՝ որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Վերջինիս կողմից ընդամենը ներկայացվել են «Բերկուտ» քոլեջում «Պահնորդական գործ» մասնագիտության դասընթացներ անցնելու վերաբերյալ վկայականներ:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 51-րդ կետի, ինչպես նաև հրավերի 8.1 կետի 8.1.2 ենթակետի պահանջներով էլեկտրոնային ծանուցմամբ առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, այն է՝ ներկայացնել պահնորդի կարգավիճակ ձեռքբերելու փաստը՝ որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները:

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ նշված ժամկետում Ընկերության կողմից վերը նշված անհամապատասխանությունը չի շտկվել՝ վերջինիս կողմից պահնորդների որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները չեն ներկայացվել:

Հետևաբար, հաշվի առնելով նշված անհամապատասխանությունն Ընկերության կողմից չշտկելու փաստը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 11.02.2016թ. որոշում է կայացվել մերժել Ընկերության կողմից ներկայացված հայտը:

Պատվիրատուն նշել է, որ 10.03.2016թ. Ընկերության կողմից Կենտրոնին ներկայացված բողոքն անհիմն է, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նման պահանջի՝ որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենների ներկայացումը, բխում է «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 12-րդ հոդվածի 3-րդ մասի, 22-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.12.2012թ. թիվ 1671-Ն որոշմամբ հաստատված «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման» կարգի 2-րդ, 21-րդ, 22-րդ կետերի պահանջներից:

Մասնավորապես, «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պահնորդը՝ պահպանվող օբյեկտների մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների, դրանց հարող տարածքների, տրանսպորտային միջոցների պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձն է:

Պատվիրատուն հայտնել է, որ նույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝ թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ և հատուկ միջոցների գործադրմամբ) իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն թիկնապահի կամ պահնորդի որակավորում:

Նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պահնորդը դա այն անձն է, ով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է համապատասխան (պահնորդի) որակավորում:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանվում է պահնորդի մասնագիտական ուսուցման, վերապատրաստման, որակավորման կարգը:

Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահնորդի մասնագիտական ուսուցումը, վերապատրաստումը, որակավորումը և որակավորման բարձրացումն իրականացնում են իրավաբանական անձ հանդիսացող և համապատասխան կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատությունները:

Վերոնշյալից հետևում է, որ հստակ տարանջատում է կատարված պահնորդի մասնագիտական ուսուցման և որակավորման միջև (հետևաբար և դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ տրվող վկայականների միջև):

Պատվիրատուն հարկ է համարում նշել, որ ՀՀ կառավարության 30.08.2012թ. թիվ 1152-Ն որոշմամբ հաստատված «Մասնավոր պահնորդական գործունեության լիցենզավորման» կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտատուն (իրավաբանական անձը) մասնավոր պահնորդական գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին է ներկայացնում պահնորդի և (կամ) թիկնապահի՝ համապատասխան որակավորման ստուգումը հավաստող փաստաթղթի, ինչպես նաև այդ անձանց անձնագրերի և նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները:

ՀՀ կառավարության 27.12.2012թ. թիվ 1671-Ն որոշմամբ հաստատված «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ որակավորումը ստուգում է թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովը:

Նույն կարգի 3-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի կազմավորման կարգը և կանոնադրությունը հաստատվում են ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

Նույն կարգի 21-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որակավորման ստուգման դրական գնահատականների հիման վրա ընդունում է որոշում թեկնածուներին որակավորման ստուգման վկայականներ տալու մասին:

Նույն կարգի 22-րդ կետի համաձայն՝ որակավորման ստուգման վկայականի ձևը՝ ըստ թիկնապահի և պահնորդի որակավորումների, սահմանվում է ոստիկանության պետի հրամանով:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ վերոնշյալ նորմերի ուժով՝ հայտատուն (իրավաբանական անձը) նույնիսկ մասնավոր պահնորդական գործունեության

իրականացման լիցենզիա ստանալու համար պետք է ունենա աշխատանքային պայմանագրեր կնքած այն պահնորդի հետ, որին հանձնաժողովի որոշման հիման վրա տրվել է պահնորդների որակավորման ստուգման վկայական: Մինչդեռ, Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում ընդամենը ներկայացվել են վկայականներ այն մասին, որ Ընկերության հիմնական աշխատակազմում ներառված մասնագետները «Բերկուտ» քոլեջում անցել են «Պահնորդական գործ» մասնագիտության դասընթացներ:

Այսինքն, տվյալ դեպքում տրվել է վկայական մասնագիտական դասընթացներ անցած լինելու և ոչ թե որակավորում ստացած լինելու վերաբերյալ:

Ըստ Պատվիրատուի՝ հանգամանքն այն մասին, որ «Բերկուտ» քոլեջում «Պահնորդական գործ» մասնագիտության դասընթացներ անցած լինելը չի կարող նույնականացվել պահնորդի որակավորման ստուգումը հավաստող փաստաթղթերի հետ, բխում է նաև ՀՀ կառավարության 27.12.2012թ. թիվ 1671-Ն որոշմամբ հաստատված «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման» կարգի 4-րդ կետի կարգավորումներից:

Մասնավորապես, վերոնշյալ կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ որակավորման ստուգմանը մասնակցելու համար թեկնածուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝ համապատասխան մասնագիտական կրթության վերաբերյալ ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ կամ մասնագիտական պատրաստվածության, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ ավարտած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ (վկայական, հավաստագիր և այլն):

Այսինքն, Ընկերության կողմից ներկայացված համապատասխան մասնագիտական կրթության վերաբերյալ ավարտական փաստաթուղթն ընդամենը հիմք է հանդիսանում պահնորդի կողմից հետագայում որակավորման ստուգմանը մասնակցելու և որակավորման ստուգման հանձնաժողովի կողմից համապատասխան վկայական ստանալու համար:

Ըստ Պատվիրատուի՝ մասնագիտական դասընթացներ անցած լինելը հավաստող վկայականների հիման վրա հնարավոր չէ փաստել Ընկերության համապատասխան աշխատակիցների պահնորդ հանդիսանալու փաստը: Մինչդեռ, Ընկերության

աշխատակիցների պահնորդ հանդիսանալու պահանջն ի սկզբանե հրավերով ներկայացվել է Ընկերությանը և ուղղակիորեն բխում է օրենսդրական պահանջներից:

Վերը նշված պատճառաբանությունների ուժով Պատվիրատուն գտել է, որ հիմնավորված չէ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ բողոքի հիմքը և այդ պահանջի հիմքում վկայակոչված «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերի խախտումները:

3. <u>ԳԲԽ-23/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-23/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԱ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից հայտով ներկայացվել է ***«Մասնավոր պահնորդական գործունեության իրականացման» N 15 լիցենզիան տրված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով որոշվել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.02.2016թ. էլեկտրոնային գրությամբ դիմել է Ընկերությանը և հայտնել, որ «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն Ընթացակարգի արդյունքում ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ խնդրելով ներկայացնել ***հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը***:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, ուսումնասիրելով «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, 09.02.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով որոշել է՝ հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետի, ինչպես նաև հրավերի 8.1 կետի 8.1.2 ենթակետի պահանջները՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունը:

6. Որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների՝ Պյոտր Կուցիկի, Սարգիս Գրիգորյանի, Շաքրո Կյուրեղյանի և Արտակ Ուռուսյանի կողմից հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, նշված մասնագետների անձնագրերի պատճենները, ինչպես նաև ***որպես որակավորումը հավաստող ՀՀ «Բերկուտ» ուսումնական կենտրոնի կողմից տրամադրված վկայականների պատճենները***՝ ըստ որոնց նշված մասնագետներն անցել են *«Պահնորդական գործ» մասնագիտության ուսուցման դասընթացներ «Բերկուտ» ուսումնական կենտրոնում: «Բերկուտ» քոլեջի* (այսուհետ նաև՝ Քոլեջ) *կողմից վերը նշված վկայականներին կից տրամադրվել են* ***ներդիրներ, նշումով՝ պահնորդի որակավորում:***

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.02.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության՝

- 1.1 կետով արձանագրել է, որ «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել անհամապատասխանությունները՝ չեն ներկայացվել ***պահնորդի կարգավիճակ ձեռքբերելու փաստը՝ որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները:***
- 1.3 կետով որոշել է մերժել «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով և որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ֆիլյոր» ՍՊԸ-ին:

8. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.03.2016թ. թիվ 01/04.1/1051-16 գրությամբ դիմել է «Բերկուտ» թիկնապահական քոլեջին, խնդրելով հայտնել, թե արդյոք

թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթներ իրականացնելու համար Քոլեջի կողմից «Պահնորդական գործ» մասնագիտության ուսուցման դասընթացներ անցնելու նպատակով Պյոտր Կուցիկին, Սարգիս Գրիգորյանին, Շաքրո Կյուրեղյանին և Արտակ Ուռուսյանին տրամադրված ***<u>վկայականները</u>*** կարող են համարվել որպես պահնորդների որակավորումը հավաստող փաստաթուղթ, թե ոչ:

9. Ի պատասխան Կենտրոնի 18.03.2016թ. թիվ 01/04.1/1051-16 գրության՝ «Բերկուտ» թիկնապահական քոլեջը 21.03.2016թ. գրությամբ հայտնել է, որ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թիկնապահի և պահնորդի մասնագիտական ուսուցումը, վերապատրաստումը, որակավորումը և որակավորման բարձրացումն իրականացնում են իրավաբանական անձ հանդիսացող և համապատասխան կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատությունները: Նման գործունեություն իրականացնելու իրավունք է վերապահված «Բերկուտ» թիկնապահական քոլեջին (ՀՀ կրթության և գիտության նախարարության լիցենզիա N 0009, տրված 16.07.2013թ.):

Քոլեջը նշել է նաև, որ վերջինիս կողմից տրամադրված վկայականները կարող են համարվել ***պահնորդի որակավորումը հավաստող փաստաթուղթ***:

<u>ԳԲԽ-23/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի 10.03.2016թ. ներկայացրած բողոքը, «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի 15.03.2016թ. թիվ 056/գ-2016թ. գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Ընթացակարգի հրավերը, «Բերկուտ» թիկնապահական քոլեջի 21.03.2016թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն նույն հոդվածով

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ***ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ <u>հրավերով նախատեսված</u> փաստաթղթերի,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Համաձայն «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի **պահնորդը՝** պահպանվող օբյեկտների մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների, դրանց հարող տարածքների, տրանսպորտային միջոցների պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական և ***պահնորդական գործու-***

նեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձն է:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թիկնապահի և պահնորդի աշխատանքին հավակնող անձը աշխատանքային պայմանագիր կնքելիս աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի հետ մեկտեղ պարտավոր է ներկայացնել իր կողմից ***հատուկ պատրաստություն (որակավորում)*** անցնելը հավաստող փաստաթուղթ:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ և հատուկ միջոցների գործադրմամբ) իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն թիկնապահի կամ ***պահնորդի որակավորում:***

Նույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թիկնապահի և պահնորդի մասնագիտական ***ուսուցումը, վերապատրաստումը, որակավորումը և որակավորման բարձրացումն*** իրականացնում են իրավաբանական անձ հանդիսացող և համապատասխան կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատությունները:

Նույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թիկնապահի և պահնորդի ***որակավորման ստուգման կարգը*** սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարության 27.12.2012թ. թիվ 1671-Ն որոշմամբ հաստատված «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ ***որակավորումը ստուգում է*** թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովը:

Հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանվել է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.6) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները:

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգարվվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և ***որակավորումը հավաստող փաստաթղթերի*** (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝

Մասնակցի աշխատակազմում պետք է ընդգրկված լինեն առնվազն 3 պահնորդ:

Գտնում ենք, որ «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի 10.03.2016թ. ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների՝ Պյոտր Կուցիկի, Սարգիս Գրիգորյանի, Շաքրո Կյուրեղյանի և Արտակ Ուռուսյանի կողմից հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, նշված մասնագետների անձնագրերի պատճենները, ինչպես նաև որպես որակավորումը հավաստող փաստաթուղթ՝ ՀՀ «Բերկուտ» ուսումնական կենտրոնի կողմից տրամադրված վկայականների պատճենները՝ ըստ որոնց նշված մասնագետներն անցել են «Պահնորդական գործ» մասնագիտության ուսուցման դասընթացներ «Բերկուտ» ուսումնական կենտրոնում:

Քոլեջի *կողմից վերը նշված վկայականները տրամադրվում են* ***ներդիրներով, որտեղ նշվում է՝ <u>պահնորդի որակավորում</u>,*** հետևաբար, գտնում ենք, որ Քոլեջի կողմից տրված վկայականները հանդիսանում են որպես պահնորդի որակավորումը հավաստող փաստաթուղթ, ինչը հաստատվել է նաև «Բերկուտ» թիկնապահական քոլեջի 21.03.2016թ. գրությամբ:

Ընկերության կողմից առաջադրված մասնակիցները կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատությունում՝ *«Բերկուտ» ուսումնական կենտրոնում* ստանալով ***պահնորդի որակավորում,*** ունեցել են պահնորդի կարգավիճակ, ինչպես նաև իրավունք՝ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ և հատուկ միջոցների գործադրմամբ) պահնորդական գործառույթներ:

Ինչ վերաբերում է «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի այն դիրքորոշմանը, որ «Բերկուտ» քոլեջում «Պահնորդական գործ» մասնագիտության դասընթացներ անցած լինելը չի կարող նույնականացվել պահնորդի որակավորման ստուգումը հավաստող փաստաթղթերի հետ, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ նույնպես գտնում ենք, որ ***ՀՀ «Բերկուտ» ուսումնական կենտրոնի կողմից տրամադրված վկայականը*** և ***պահնորդի որակավորման ստուգումը հավաստող վկայականը*** տարբեր փաստաթղթեր են, ուստի և «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ թիկնապահի և պահնորդի *արդեն իսկ ստացած որակավորումն է* միայն ստուգվում թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի կողմից, իսկ հանձնաժողովն առանց համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված որակավորման չի կարող իրականացնել որակավորման ստուգում և տալ վկայական: Հետևաբար ակնհայտ է, որ համապատասխան ուսումնական հաստատությունը տալիս է որակավորում, իսկ հանձնաժողովն իրավասու է միայն այն ստուգել:

Այսինքն, պահնորդը, նախ, ստանում է որակավորում, այնուհետև, այդ որակավորումը ստուգվում է թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի կողմից:

Այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 30.08.2012թ. թիվ 1152-Ն որոշմամբ հաստատված «Մասնավոր պահնորդական գործունեության լիցենզավորման» կարգով լիցենզիա ստանալու համար հայտատուից պահանջվում է ներկայացնել պահնորդի որակավորման ստուգումը հավաստող փաստաթղթի պատճենը, չի կարող պատվիրատուին կամ այլ անձի իրավունք վերապահել անտեսելու համապատասխան կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատության կողմից որևէ պահնորդի տրված որակավորումը: Ընդ որում, ինչպես արդեն նշվեց, «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ միայն որակավորման առկայությունը բավարար է համապատասխան աշխատանքային պայմանագիր կնքելու և որպես պահնորդ աշխատելու համար: Այսինքն՝ տվյալ դեպքում «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից որպես պահնորդ ներկայացված անձանց մոտ պահնորդի որակավորման ստուգման վկայականի բացակայությունը կարող է քննարկման առարկա դառնալ միայն

այդ կազմակերպության լիցենզավորման կամ լիցենզիայի պահանջների պահպանման տեսանկյունից, այլ ոչ թե պահնորդի որակավորում ունենալու տեսանկյունից:

Բացի այդ, Հրավերով սահմանված չէ պահանջ, որպեսզի վերը նշված որակավորման չափանիշը ապահովելու համար Ընկերության կողմից ներկայացվի պահնորդի որակավորման ստուգումը հավաստող վկայականներ, որպիսի պայմաններում տվյալ գնման գործընթացին մասնակցող տնտեսվարող սուբյեկտները չէին կարող ենթադրել, որ Հրավերով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշին բավարարելու համար պահնորդի որակավորում ունեցող անձանց ներկայացնելը կարող է բավարար չհամարվել:

Ուստի գտնում ենք, որ Ընկերությունը բավարարել է Հրավերով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշին, քանի որ ներկայացրել է Ընկերության հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների «Բերկուտ» քոլեջում «Պահնորդական գործ» մասնագիտության դասընթացներ անցնելու վերաբերյալ որպես պահնորդի որակավորումը հավաստող փաստաթուղթ՝ ***ՀՀ «Բերկուտ» ուսումնական կենտրոնի կողմից տրամադրված վկայականները՝ պահնորդի որակավորմամբ:***

Գտնում ենք, որ Պատվիրատուն մերժելով Ընկերության հայտը՝ խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչպես նաև «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի 10.03.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԱ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1.3 կետով կայացրած որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-23/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան